

**ՀՀ ԵՎ ԵՄ ՄԻՋԵՎ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ**

ՀԱՅԿ ԽԵՄՉՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների սերտացմանը զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ ստորագրելու հիմնարար փաստաթուղթ, որը պետք է կարգավորեր բոլոր տեսակի հարաբերությունները: Այդպիսի փաստաթուղթ պետք է դառնար Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ ԳՀՀ), որի ստորագրման շուրջ բանակցությունները սկսվել էին դեռևս 1990-ականների սկզբին:

1994 թ. հոկտեմբերի 4-ին Եվրոպական միության արտգործնախարարները Լյուքսեմբուրգում կայացած հանդիպման ժամանակ հայտարարեցին. «Հաշվի առնելով այս երկրներում քաղաքական քաջալերող զարգացումը, մասնավորապես՝ Հայաստանի և Ադրբեյջանի միջև ստորագրված հրադադարի համաձայնությունը, անհրաժեշտ է աշխուժացնել 1989 թ. մանդատի հիման վրա խառը հանձնաժողովների աշխատանքը և խորացնել ապագա Գործընկերության և համագործակցության պայմանագրի բովանդակությունը»¹:

Հայաստան-Եվրոպական միություն խառը հանձնաժողովի հանդիպումը կայացավ 1995 թ. մարտի 3-ին, և Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո առաջին անգամ խոսվեց Հայաստանի և Եվրոպական միության հարաբերությունների համընդհանրության մասին:

1995 թ. հունիսի 12-ին ԵՄ-ի արտգործնախարարների խորհուրդը Լյուքսեմբուրգում կայացած հանդիպման ժամանակ, անհրաժեշտ գտնելով ուժեղացնել Հարավային Կովկասի հանրապետությունների հետ ԵՄ-ի պայմանագրային հարաբերությունները, հանձնաժողովին թույլատրեց Հայաստանի հետ բանակցություններ սկսել՝ Գործընկերության և համագործակցության պայմանագիր ստորագրելու նպատակով²:

ԳՀՀ-ի շուրջ բանակցություններն ընթացան երկու փուլով: Առաջինը տեղի ունեցավ 1995 թ. հոկտեմբերի 12-13-ին Բրյուսելում, որից հետո մնացել էր երեք հիմնական վիճելի հարց.

- Բարձրաստիճան քաղաքական երկխոսության հաստատում,
- Հայաստանի և ԵՄ-ի հարաբերությունների զարգացման մասին դրույթ, որտեղ պիտի նշվեր փոխանակության ազատ գոտի ստեղծելու մասին,

¹ Եվրոպական միության մամուլի հաղորդագրություն, PRES/95/174, 12 հունիսի 1995 թ.:

² Տե՛ս նույն տեղը:

- Համագործակցություն միջազգային բնագավառում, մասնավորապես՝ տեխնիկական աջակցություն միջուկային անվտանգության ոլորտում³:

Բանակցությունների երկրորդ փուլն ընթացավ 1995 թ. դեկտեմբերի 14-15-ը, որի ավարտին հնարավոր եղավ համաձայնություն ձեռք բերել, և հայկական պատվիրակության պահանջները մեծ մասամբ բավարարվեցին⁴:

1995 թ. դեկտեմբերի 15-ին Բրյուսելում ԱՊՀ, Եվրամիության և միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապի գծով նախարար, ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչության ղեկավար Գագիկ Շահբազյանը և Եվրոպական միության արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրինության ենթաբաժնի վարիչ Ֆոկիոն Ֆոտիադիսը նախաստորագրեցին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ԳՀՀ-ն⁵:

Այդ կապակցությամբ Եվրամիության տարածած մամուլի հաղորդագրության մեջ նշվում էր, որ համաձայնագիրը ճանաչում է Հայաստանի անկախությունը, ինքնուրույնությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև հատուկ ընդգծում է Անդրկովկասի տարածաշրջանի անկախ պետությունների և հարևան երկրների միջև համագործակցության անհրաժեշտությունը՝ իբրև տարածաշրջանում բարեկեցության և կայունության ապահովման միջոց⁶: Համանման հաղորդագրություն տարածվեց նաև մյուս պետությունների, այդ թվում՝ Ադրբեջանի համար⁷:

Նախաստորագրման ժամանակ նշվեց, որ դրան հաջորդող երեք ամիսների ընթացքում Եվրոպական հանձնաժողովը պետք է մշակի միջանկյալ պայմանագրի տեքստ, որը կստորագրվի Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի հետ միաժամանակ: Միջանկյալ փաստաթղթի անհրաժեշտությունը բացատրվում էր նրանով, որ ԵՄ-ի անդամ 15 երկրների խորհրդարաններում համաձայնագրի վավերացումը կարող էր երկար տևել, և անհրաժեշտ էր որոշել անցումային շրջանի պայմանները⁸:

Նշվեց նաև, որ Եվրոպական հանձնաժողովը Հարավային Կովկասի պետությունների համար ուսումնասիրում է համաձայնագրի ստորագրման երկու հնարավոր տարբերակ: Յուրաքանչյուր երկրի և Եվրամիության միջև փաստաթղթի ստորագրումը կարող էր բավական երկար ժամանակ պահանջել, քանի որ այն հնարավոր էր միայն ԱԳ նախարարների խորհրդի նիստի ընթացքում՝ յուրաքանչյուր ամսվա սկզբին, և հնարավոր էր, որ հանրապետություններն այն ստորագրեին մեկական ամիս ընդմիջումով: Երկրորդ տարբերակը միաժամանակյա ստորագրումն էր, որի դեպքում երեք պետությունների ղեկավարները միաժամանակ պետք է ժամանեին Բրյուսել: Ե՛վ հայկական կողմը, և՛ Եվրոպական միությունը առավել հակված էին միաժամանակյա ստորագրման տարբերակին:

³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ № 191, էջ 49:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 3:

⁶ Տե՛ս Եվրոպական միության մամուլի հաղորդագրություն, IP/96/11, 9 հունվարի 1996 թ.:

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ № 191, էջ 5:

Արդեն 1996 թ. հունվարի 9-ին Բրյուսելում տեղի ունեցավ Եվրոպական միության խորհրդի նիստը «ԱՊՀ երկրներ» թեմայով: Խորհրդի նիստի ժամանակ նշվեց, որ համաձայնագիրն ամենայն հավանականությամբ կստորագրվի 1996 թ. ապրիլի 22-ին՝ ԵՄ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ: Ստորագրման ժամկետը մեծապես կախված էր թարգմանչական աշխատանքի արագությունից, քանի որ փաստաթղթերը պետք է թարգմանվեին բոլոր անդամ երկրների և ստորագրող երկրի լեզվով: Հայկական կողմին ևս խնդրվեց հնարավորինս կարճ ժամկետում փաստաթղթի հայերեն թարգմանությունը ներկայացնել Եվրոպական հանձնաժողովին:

ԵՄ-ում Վրաստանի ներկայացուցիչը Խորհրդի նիստի ժամանակ կասկած հայտնեց երեք պետությունների կողմից միաժամանակյա ստորագրման տարբերակի վերաբերյալ: Այդ դիրքորոշումը նա բացատրում էր այն հանգամանքով, որ վրացական կողմը նախատեսում էր ստորագրման առթիվ կազմակերպել մի շարք միջոցառումներ և հանդիպումներ⁹: Այստեղ ակնհայտ են վրացական կողմի շարժառիթները, քանի որ Վրաստանը միշտ ցանկացել է առանձնանալ հարավկովկասյան մյուս հանրապետություններից և ներկայանալ որպես յուրաքանչյուր նախաձեռնության առաջամարտիկ: Այնուամենայնիվ, այս առումով հանդիպելով Եվրոպական կողմի ճնշմանը, Վրաստանը հրաժարվեց իր մտադրությունից:

1996 թ. փետրվարի 9-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վարդան Օսկանյանը հանդիպեց տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած Եվրոպական միության հանձնաժողովի արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրինության պատասխանատու Ֆոկիոն Ֆոտիադիսին:

Անդրադառնալով ԳՀՀ-ի ստորագրման առաջարկվող երկու տարբերակներին՝ Ֆոտիադիսը տեղեկացրեց, որ միաժամանակյա ստորագրումը չի բացառում երկկողմ ծրագրի կազմակերպումը, և նշեց, որ երեք երկրների նախագահների համար կնշակվեն անհատական ծրագրեր, հանդիպումներ Հանձնաժողովում և Եվրոպական խորհրդարանում, ցանկության դեպքում՝ ելույթ Խորհրդարանում, հանդիպումներ Բելգիայի ղեկավարության հետ:

Անդրադառնալով ստորագրման վերաբերյալ Վրաստանի դիրքորոշմանը՝ Ֆոտիադիսը նշեց, որ նախորդ օրը Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն պաշտոնապես հայտնել է, որ Վրաստանը պատրաստ է ընդունելու միաժամանակյա ստորագրման տարբերակը: Նա հավելեց նաև, որ, կազմակերպելով միաժամանակյա ստորագրումը, հանձնաժողովը փորձում է ընդգծել տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին մասնակից լինելու իր ցանկությունը, միաժամանակ ցանկանալով, որ Մինսկի խումբը հստակորեն իմանա, որ ԵՄ-ն մտադիր չէ ԼՂ-ի հարցի կարգավորման գործընթացը վերցնել իր հովանու ներքո: Նա նաև ասաց, որ արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրինությունը պետք է միաժամանակյա ստորագրման առաջարկը ներկայացնի կոմիսար Վան դեն Բրուկին և անդամ երկրներին: Ստորագրման ժամկետի մասին որոշումը պետք է ընդունվեր Ընդհանուր հարցերի խորհրդի (General Affairs Council) նիստում:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 23:

Ի պատասխան վրացական կողմի պնդումների՝ Վարդան Օսկանյանը նշեց, որ եթե Վրաստանը շարունակի պնդել երկկողմ տարբերակի վրա, ապա Հայաստանը կբարձրացնի հերթականության հարցը: Հայաստանն առաջինը ստորագրելուն կարող էր հավակնել երեք պատճառով՝ ելնելով այբբենական կարգից, բարեփոխումների ընթացքից և ԵՄ-ի խորհրդարանական վեհաժողովում ստացած հատուկ հրավիրյալի կարգավիճակից¹⁰:

Այցելելով Հարավային Կովկաս՝ Ֆոտիադիսը ավելի լավ տպավորություն էր ստացել Վրաստանից և Ադրբեջանից, քան Հայաստանից: Պատճառն այն էր, որ Վրաստանում և Ադրբեջանում նրան ընդունել էին ամենաբարձր մակարդակով, մինչդեռ Հայաստան այցելելիս նա նույնիսկ խնդիրներ էր ունեցել մաքսատան աշխատակիցների հետ¹¹:

ԳՀՀ-ն քննարկվեց ևս մեկ անգամ 1996 թ. փետրվարի 20-ին Եվրոպական խորհրդարանի՝ Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ժողովում, որը նախագահում էր պատգամավոր Անտոնիոս Տրակատելիսը: Նիստին մասնակցում էին Հայաստանի ներկայացուցչության փոխղեկավարը, Ադրբեջանի և Վրաստանի դեսպանները, ինչպես նաև Եվրոպական միության կառույցները ներկայացնող պաշտոնյաներ: Որպես ստորագրման հնարավոր ժամկետ նշվում էր Եվրախորհրդարանի լիազույժար նստաշրջանի շրջանակներում՝ ապրիլի 22-ը, կամ Ստրասբուրգում՝ Եվրախորհրդարանի նստաշրջանին նախորդող շաբաթը (1996 թ. ապրիլի 15-19)¹²:

1996 թ. մարտին արդեն վերջնականապես հստակ էր, որ ԳՀՀ-ն կստորագրվի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում, և որ համաձայնագրի ստորագրման հետ միաժամանակ կստորագրվի առևտրի ոլորտն ամփոփող ժամանակավոր համաձայնագիրը¹³:

1996 թ. մարտի 25-ին ԵՄ-ում ՀՀ առաքելության փոխղեկավարը մասնակցեց ԵՄ խորհրդի թարգմանչական ծառայության ժողովին, որին ներկա էին նաև Եվրոպական հանձնաժողովի պատասխանատուները: Ժողովի նպատակն էր սրբագրել ԳՀՀ-ի տեքստը, որում փոխվեցին միայն աննշան բառեր և բառակապակցություններ¹⁴: Նախապատրաստական մյուս բոլոր աշխատանքները հիմնականում արարողակարգային բնույթի էին:

Վերջապես, 1996 թ. ապրիլի 22-ին՝ ժամը 12:30-ին, Լյուքսեմբուրգում տեղակայված Եվրոպական խորհրդարանի շենքում հարավկովկասյան երեք երկրների արտաքին գործերի նախարարները միաժամանակ ստորագրեցին իրենց երկրների հետ Եվրոպական միության ԳՀՀ-ն: Համաձայնագրերի ստորագրման կապակցությամբ երեք երկրների նախագահները հանդես եկան հետևյալ համատեղ հայտարարությամբ. «Անդրկովկասյան նախագահների միաժամանակյա ստորագրությունը խորհրդանշում է այն մերձեցումը, որ ուրվագծվում է այդ շրջանում և ընդգծում անդրկովկասյան պետությունների ցանկությունը համագործակցել փոխադարձ շահե-

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 29-30:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 32-34:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 37:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 54:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 80:

րի ոլորտում՝ ներառյալ ավանդական հաղորդակցության ուղիների վերաբացումը: Եվրոպական միությունը հույս ունի, որ դա նպաստելու է նաև տեղական հակամարտությունների և լարվածության հաղթահարմանը»¹⁵:

Համաձայնագիրը Եվրոպական միության կողմից ստորագրեցին ԵՄ խորհրդի նախագահ, Իտալիայի արտաքին գործերի նախարար Սյուզան Անյելին և Եվրոպական հանձնաժողովի անդամ Հանս Վան դեն Բրուկը: Ստորագրողների թվում էին նաև ԵՄ 15 անդամ պետությունների արտաքին գործերի կամ եվրոպական հարցերով նախարարները:

Ստորագրման մեկնած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը բավականին բազմանդամ էր: Բացի արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանից և դեսպան Արմեն Սարգսյանից՝ Հայաստանի նախագահին ուղեկցում էին պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Եվրոպական միությունում ՀՀ առաքելության ղեկավար, նախարար Գագիկ Շահբազյանը և ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը:

Լյուքսեմբուրգում կազմակերպվեց նաև Տեր-Պետրոսյան-Ալին հանդիպումը, որի ընթացքում նախագահները խոսեցին Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման մասին և հանդես եկան համատեղ հայտարարությամբ¹⁶:

ԳՀՀ-ի նպատակն էր տնտեսական համագործակցության խորացումը, ապրանքների ու ծառայությունների բարենպաստ պայմանների ստեղծումը, փոխադարձ առևտրի և քաղաքացիների ու ընկերությունների կապիտալ ներդրումների գործընթացի դյուրացումը: Փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ էր, որովհետև Հայաստանի Հանրապետության հետ համաձայնագրի կողմ էր եվրոպական ծանրակշիռ պետությունների մի մեծ խումբ:

Այնուամենայնիվ, համաձայնագրում կային որոշ դրույթներ, որոնք հակասում էին ՀՀ օրենքներին: Մասնավորապես, համաձայնագրի 29-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը հակասում էր «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին: ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում նշվում է. «Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»¹⁷, մինչդեռ ԳՀՀ-ն նույն այդ ձևակերպմամբ սահմանում է 3 տարի ժամկետ: Այնուամենայնիվ, այս հակասությունը չէր կարող լուրջ խոչընդոտ լինել ԳՀՀ-ի վավերացման համար:

1996 թ. մայիսի 23-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից Դավիթ Տիրը և Հայաստանի Հանրապետության կողմից ՀՀ առաքելության փոխղեկավար Քրիստիան Տեր-Ստեփանյանը Բրյուսելում նախաստորագրեցին «Առևտրի և հարակից միջոցառումների» վերաբերյալ ժամանակավոր համաձայնագիրը, որը հնարավորություն պետք է տար մինչև ԳՀՀ-ի վավերաց-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 45:

¹⁷ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

ման գործընթացի ավարտն ուժի մեջ մտցնելու առևտրին և հարակից միջոցառումներին վերաբերվող դրույթները: Փաստաթուղթը ստորագրվեց 1996 թ. դեկտեմբերի 10-ին Բոյուսելում և ուժի մեջ մտավ 1997 թ. դեկտեմբերի 1-ին: Այն չէր պահանջում որևէ վավերացում ստորագրողների կողմից¹⁸:

ԳՀՀ-ի տեքստը պարունակում էր.

- Բուն տեքստը՝ կազմված նախաբանից և 102 հոդվածներից,
- Հինգ հավելված,
- Մաքսային հարցերում փոխադարձ աջակցության վերաբերյալ արձանագրություն,

• 4, 6, 15, 25(b) և 36, 35, 42 և 95 հոդվածներին վերաբերող միացյալ հայտարարություններ,

• ԵՄ անդամ պետությունների ընկերությունների՝ նաև Հայաստանում հիմնվելու մասին նամակների փոխանակում,

• Ֆրանսիայի կառավարության կողմից հայտարարություն, ըստ որի՝ ԳՀՀ-ն չպետք է կիրառվեր իր արտածոլյա դեպարտամենտների և տարածքների վերաբերյալ:

ԳՀՀ-ի տեքստը հրապարկվեց Համայնքների պաշտոնական թերթում՝ № L/239 առ 9 սեպտեմբերի 1999 թ.: Հայաստանում ԳՀՀ-ն չիրապարակվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում, սակայն Սահմանադրական դատարանի որոշման մեջ նշվեց. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ համաձայնագրի 4, 29, 30, 32 և մի շարք այլ հոդվածներում, ինչպես նաև հավելվածներում տեղ են գտել ոչ հստակ ձևակերպումներ և այլ լեզուներով կազմված տեքստերի հետ անհամապատասխանություններ»¹⁹: Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Ի՞նչ նպատակներ ունի ԳՀՀ-ն: Դրա մասին նշվում է ԳՀՀ-ի հենց առաջին հոդվածում.

• ապահովել համապատասխան հենք կողմերի միջև քաղաքական երկխոսության համար՝ նպատակ ունենալով քաղաքական կապերի զարգացումը,

• աջակցել Հայաստանի Հանրապետության ջանքերին՝ ամրապնդելու իր ժողովրդավարությունը, զարգացնելու տնտեսությունը և ավարտելու անցումը շուկայական տնտեսությանը,

• նպաստել կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին և այդպիսով խթանել դրանց կայուն տնտեսական զարգացումը,

¹⁸ Տե՛ս Եվրոպական միության մամուլի հաղորդագրություն, IP/97/563, 26 հունիսի 1997 թ. :

¹⁹ Սահմանադրական դատարանի որոշում, ՍԴՈ-57, առ 23 մայիսի 1997 թ. :

- հիմք ապահովել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար:

Ինստիտուցիոնալ առումով ԳՀՀ-ն նախատեսում էր ինստիտուտների ձևավորում:

- Համագործակցության խորհուրդը, որը պետք է վերահսկի ԳՀՀ-ի իրականացումը: Այն կազմված է Հայաստանի կառավարության և անդամ պետությունների ու Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներից: Համագործակցության խորհուրդը հանդիպում է տարին մեկ անգամ (առաջին հանդիպումը տեղի ունեցավ Լյուքսեմբուրգում 1999 թ. հոկտեմբերի 12-ին)²⁰:

- Համագործակցության կոմիտեում ներկայացված են նույն կողմերը, բայց ավագ քաղաքացիական ծառայողների մակարդակով: Այն պատրաստում է խորհուրդների նիստերը: Կոմիտեն կարող է ստեղծել ենթակոմիտեներ և այլ մարմիններ իր աշխատանքին նպաստելու համար (այն իր առաջին նիստը գումարեց 2000 թ. մարտի 13-ին Բրյուսելում)²¹:

- Խորհրդարանական համագործակցության կոմիտեն բաղկացած է Հայաստանի և Եվրոպական խորհրդարանների անդամներից և երկխոսության ֆորում է երկու մարմինների միջև (կոմիտեի առաջին հանդիպումը տեղի ունեցավ Բրյուսելում, 1999 թ. դեկտեմբերի 6-ին)²²:

Համաձայնագրում մեծ ուշադրություն էր դարձված նաև ԳԱՏՏ/ԱՅԿ-ին և անցումային դրույթներին: Մասնավորապես, տնտեսական առումով Հայաստան-ԵՄ հարաբերությունների հիմնական գաղափարներից մեկն առավել բարենպաստ ազգային ռեժիմն էր, որը ենթադրում էր, որ որևէ այլ երկրի չեն տրվելու ավելի լավ պայմաններ, քան համաձայնագրի կողմ հանդիսացողներին: Իհարկե, հիմնականում դա իմաստ ուներ այն ժամանակ, երբ Հայաստանը դեռ ԱՅԿ անդամ չէր, քանի որ ԱՅԿ բոլոր անդամները մեկը մյուսի նկատմամբ պարտավոր են կիրառել առավել բարենպաստ ազգային ռեժիմ: Այնուամենայնիվ, կողմերի տնտեսական շահերը այդքանով չէին սահմանափակվում, և համաձայնագրի մեծ մասը վերաբերում էր տնտեսական հարաբերություններին:

Քաղաքական առումով ԳՀՀ-ն նախատեսում էր քաղաքական երկխոսություն, որը

- կամրապնդի Հայաստանի Հանրապետության կապերը Համայնքի և դրա անդամ պետությունների և, հետևաբար, ժողովրդավարական ազգերի ողջ հանրության հետ: Համաձայնագրի միջոցով ձեռք բերված տնտեսական մերձեցումը կառաջնորդի դեպի ավելի սերտ քաղաքական կապերի հաստատում,

- կնպաստի Անդրկովկասի անկախ պետությունների հետագա զարգացմանն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային

²⁰ Տե՛ս «Official Journal of the European Communities» 18.11.1999, L 297, Brussels, էջ 24:

²¹ Տե՛ս «Guide to the implementation of the partnership and cooperation agreement between Armenia and the European Communities and their member states», Brussels 2000, էջ 16:

²² Տե՛ս նույն տեղը:

հարցերում դիրքորոշումների համընկնմանը և, դրանով իսկ, այդ տարածաշրջանում անվտանգության ու կայունության աճին,

- կնախատեսի, որ կողմերը ջանքեր գործադրեն՝ համագործակցելու եվրոպայում կայունության և անվտանգության ամրապնդման, ժողովրդավարության սկզբունքների իրագործման, մարդու, մասնավորապես՝ փոքրամասնությունների իրավունքների հարգման և պաշտպանության վերաբերյալ հարցերում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելու առնչվող հարցերի շուրջ:

Համաձայնագրով նախատեսված քաղաքական երկխոսությունը պետք է ընթանար հետևյալ մակարդակներով.

- Համագործակցության խորհրդի շրջանակներում՝ նախարարական մակարդակով,

- Խորհրդարանական համագործակցության կոմիտեի մակարդակով,

- Բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով,

- Դիվանագիտական ուղիներով՝ ներառյալ համապատասխան կապերը երկկողմ, ինչպես նաև բազմակողմ ասպարեզներում, ինչպիսիք են, օրինակ՝ Միավորված ազգերի, ԵԱՀԿ-ի և այլ հանդիպումները,

- Այլ մակարդակներով, ինչպիսիք են, օրինակ՝ փորձագետների հանդիպումները:

ԳՀՀ-ի շրջանակներում նախատեսված ֆինանսական աջակցության միակ գործիքը TACIS-ն է: TACIS-ի միջոցով Հայաստանն օգնություն սկսել է ստանալ 1992-ից: 1992-1995 թթ. այդ ծրագրով Հայաստանին ընդհանուր առմամբ հատկացվել է 24 միլիոն էքյու: Այդ շրջանում դրամական միջոցները հիմնականում կենտրոնացվում էին ձեռնարկատիրական վերաբաշխման, մասնավոր հատվածի և մարդկային ռեսուրսների զարգացման, ինչպես նաև ինստիտուտների ստեղծման վրա: Համագործակցության ևս մեկ առաջնահերթություն էր էներգետիկան: Այնուամենայնիվ, 1996-ից տեխնիկական աջակցության մասնաբաժինն ավելացավ, և Հայաստանը սկսեց աջակցություն ստանալ նաև սոցիալական, քաղաքական, տնտեսական բարեփոխումների և սննդային անվտանգության ապահովման համար: 1996-1999 թթ. Հայաստանը ստացավ ևս 24 միլիոն էքյուի տեխնիկական աջակցություն²³:

1999 թ. հուլիսին ԳՀՀ-ի ուժի մեջ մտնելը իրավական հիմք ստեղծեց աջակցության համար: ԳՀՀ-ի որոշ հողվածներ ուղղակիորեն նշում են, թե որ ոլորտներում է նախատեսվում հատկացնել տեխնիկական աջակցություն:

Օրենսդրական համագործակցության շրջանակներում տեխնիկական աջակցություն

- փորձագետների փոխանակում,

- նախնական տեղեկության մատակարարում՝ համապատասխան օրենսդրության վերաբերյալ,

- դասընթացների կազմակերպում,

- մասնագետների վերապատրաստման գործունեություն,

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 92-93:

- օգնություն համապատասխան ոլորտների վերաբերյալ Համայնքի օրենսդրության թարգմանության համար:

Ստանդարտների և գնահատման հաստատման համագործակցության շրջանակներում տեխնիկական աջակցություն: Այն

- կնպաստի այդ բնագավառներում մասնագիտացված կազմակերպությունների և հաստատությունների հետ համապատասխան համագործակցությանը,

- կնպաստի համագործակցության տեխնիկական կանոնակարգերի օգտագործմանը և եվրոպական ստանդարտների ու համապատասխանելիության ստուգաբանման ընթացակարգերի կիրառմանը,

- հնարավորություն կտա փոխանակելու որակի կառավարման բնագավառում տեխնիկական տեղեկությունը և փորձը:

Ֆինանսական ծառայությունների ոլորտում տեխնիկական օգնություն, որը ներառում է՝

- բանկային և ֆինանսական ծառայությունների, վարկային ռեսուրսների ընդհանուր շուկայի զարգացում, Հայաստանի Հանրապետության ներգրավում համընդհանուր ճանաչում ստացած փոխադարձ հաշվարկների համակարգերում,

- Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի և դրա հաստատությունների զարգացում, փորձի փոխանակում և անձնակազմի վերապատրաստում,

- ապահովագրական ծառայությունների զարգացում, որը, ի թիվս այլոց, բարենպաստ հիմք կարող է ստեղծել Հայաստանի Հանրապետության ապահովագրական ոլորտում համատեղ ձեռնարկությունների հիմնադրման գործում Համագործակցության ընկերությունների մասնակցության համար, ինչպես նաև՝ արտահանվող վարկի ապահովագրության զարգացում: Այդ համագործակցությունը մասնավորապես կնպաստի Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև հարաբերությունների զարգացմանը:

Սոցիալական համագործակցություն

- աշխատանքի շուկայի օպտիմիզացում,
- զբաղվածության հարցերով ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների համակարգերի նորացում,

- վերակառուցման ծրագրերի պլանավորում և կառավարում,

- տեղական զբաղվածության խրախուսում,

- ճկուն զբաղվածության, ներառյալ անհատական աշխատանքային գործունեությունը խթանող և ձեռներեցությունը խրախուսող ծրագրերի մասին տեղեկության փոխանակում:

Փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտում

- ՓՄՁ-ի օրենսդրական դաշտի կատարելագործում,

- համապատասխան ենթակառուցվածքի զարգացում (ՓԲՁ-ին օժանդակող գործակալություն), հաղորդակցություն, աջակցություն ՓՄՁ-ի հիմնադրամի ստեղծման գործին,

- տեխնոլոգիաների հավաքակայանների ստեղծում:

Տնտեսական ոլորտում

- տնտեսական բարեփոխումների գործընթացում աջակցություն Հայաստանի Հանրապետությանը՝ փորձագիտական, խորհրդատվական և տեխնիկական օգնություն տրամադրելու ճանապարհով,

- համագործակցության խրախուսում տնտեսագետների միջև՝ արագացնելու համար տեղեկության և «նուս-հաու»-ի փոխանցումը տնտեսական քաղաքականության մշակման նպատակով, ինչպես նաև՝ տնտեսական քաղաքականության բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքները լայնորեն տարածելու նպատակով:

Ապօրինի գործողությունները կանխելու դեմ պայքարում

- ապօրինի գործողությունների կանխմանն ուղղված ազգային օրինագծերի պատրաստման համար,

- տեղեկատվական կենտրոնների ստեղծման համար,

- օրինապահ մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար,

- անձնակազմի վերապատրաստման և հետազոտական ենթակառուցների զարգացման համար,

- ապօրինի գործողությունների կանխարգելմանն ուղղված երկուստեք ընդունելի միջոցառումների մշակման գործընթացների համար:

Նախատեսված է անհրաժեշտության դեպքում տեխնիկական օգնություն նաև մաքսային (հոդված 65), վիճակագրական համագործակցության (հոդված 66) և փողերի վլացման դեմ պայքարի (հոդված 70) ոլորտներում:

Բացի այդ, ԳՀՀ-ն նախատեսում է համագործակցություն ևս մի շարք բնագավառներում, ինչպիսիք են՝ օրենսդրական համագործակցությունը, համագործակցությունն ապօրինի գործողությունների կանխման և անօրինական ներգաղթի կանխարգելման ու վերահսկման բնագավառում, մշակութային համագործակցությունը և այլ ոլորտներ: Մասնավորապես կարևոր քայլեր էին կատարված ներդրումները խրախուսող պայմանագրային դաշտ ստեղծելու առումով²⁴:

Այսպիսով, Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն էր առաջացել իրավական հիմք ստեղծելու այդ հարաբերությունների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստան-ԵՄ իրավապայմանագրային դաշտն իսպառ բացակայում էր, ԳՀՀ-ն եկավ լրացնելու այդ բացը: Այն ստորագրելու նախապատրաստական աշխատանքները հաճախ արհեստականորեն ձգձգվում էին ԵՄ-ի այն ցանկության պատճառով, որ Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունները պետք է միաժամանակ ստորագրեն համաձայնագիրը:

Ինչ վերաբերում է բուն համաձայնագրին, ապա թեև այն ներառում էր բազմաբնույթ հարցեր ու նախանշում տարբեր ոլորտներում համագործակցության խնդիրներ, բայց և այնպես հիմնական շեշտը դրվում էր համաձայնագրի տնտեսական բաղադրիչի վրա:

²⁴ Տե՛ս **Marc Bungenberg**, International Investment Law and EU Law, Siegen, 2011, էջ 127:

ГАЙК ХЕМЧЯН – Подготовка и подписание соглашения о партнёрстве и сотрудничестве между Республикой Армения и Европейским Союзом. – С развитием отношений между Арменией и ЕС возникла необходимость создать для них правовую основу. Имея в виду, что договорно-правовая база между Арменией и ЕС полностью отсутствовала, соглашение о партнёрстве и сотрудничестве должно было заполнить этот пробел. Работы по его подготовке часто искусственно затягивались, чтобы все три государства Южного Кавказа подписали соглашение одновременно. В итоге оно было подписано 22 апреля 1996 г. и затрагивало широкий круг вопросов – как демократию и права человека, так и сотрудничество в экономике, политике, законодательстве и т. д. Но основной упор делался на экономическую сферу.

HAYK KHEMCHYAN – Preparation and Signing of the Partnership and Cooperation Agreement between the Republic of Armenia and the European Union. – The article is about the Partnership and Cooperation Agreement between the Republic of Armenia and the European Union. With the development of the relations between Armenia and EU, there was necessity to give a legal basis to these relations. Considering the fact, that there was no legal basis between Armenia and EU, Partnership and Cooperation Agreement had to fill this gap. Works on the preparation of signing it were often artificially postponed because of the desire of the EU that all the three countries of the South Caucasus signed the agreement together. The PCA was signed on April 22, 1996.

The Partnership and Cooperation Agreement was about a wide range of questions. There were included not only the questions about democracy and human rights, but also tasks on economics, politics, law and other spheres. But the main emphasis was laid on the economic element.